

ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁՈՒԹԵԱՆ

ՀԱԿԻՐՃ ՈՒՂԵՑՈՅՑ

ԱՄԷՆՈ, ԻՆՉ ՊԵՏՔ Է ԳԻՏՆԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ ՏԵՂԱՓՈԽՈՒԵԼՈՒ ՀԱՄԱՐ



ՊԱՏՐԱՍՏՈՒԱԾ Է

ՍՓԻՒՔԻ ԳՈՐԾԵՐՈՒ ԳԼԽԱԻՈՐ
ՅԱՆՁՆԱԿԱՏԱՐԻ ԳՐԱՍԵՆԵԱԿԻ
ԵՎ

REPAT ARMENIA ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԷ

ԳԼԽԱԴՈՐ ՅԱՆՁՆԱԿԱՏԱՐ
ԶԱՐԵՀ ՍԻՆԱՆՅԱՆ



ՍԻՐԵԼԻ՝ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ,

Բարի գալուստ տուն: Մենք՝ ի դեմս ՀՀ սփյուռքի գործերու գլխավոր յանձնակատարի գրասենեակի, կ'ողջունենք հայրենադարձուելու Ձեր որոշումը եւ պատրաստ ենք հնարաւորինս Ձեր կողքին ըլլալու: Մեր գրասենեակը տեղեկութիւններ կը տրամադրէ եւ անհատական խորհրդատուական ծառայութիւններ կը մատուցէ Ձեզի եւ Ձեր ընտանիքին, հանդիսանալով կապող օղակ բոլոր պետական հաստատութիւններուն միջեւ՝ ապահովելով լիարժէք ընդելուզում հայաստանեան հասարակութեան մէջ:

Հայրենադարձութեան այս հակիրճ ուղեցոյցը, որ մենք պատրաստած ենք Repat Armenia հիմնադրամի մեր գործընկերներուն հետ միասին, պիտի ծառայէ որպէս ուղեցոյց Հայաստան տեղափոխուելու, ապրելու եւ աշխատելու համար: Այն կը տրամադրէ տարաբնոյթ գործնական տեղեկութիւններ եւ խորհուրդներ, ուղղորդումներ այն փաստաթուղթերու վերաբերեալ, որոնք հարկաւոր են ՀՀ քաղաքացիութիւն կամ կեցութեան իրաւունք ստանալու, անձնական գոյքի տեղափոխման, հասցէի գրանցման, հանրային ծառայութեան համարանիշի ձեռքբերման, դպրոց արձանագրուելու, դրամատնային հաշիւ բանալու, բնակարան վարձակալելու եւ բազում այլ գործընթացքներու համար:

Հայրենադարձութեան խթանումը եւ հայրենադարձներու ընդելուզման աջակցութիւնը մեր առաջնահերթութիւններէն են: Ազատ եղէք կապ հաստատելու մեզի հետ, եւ մենք ուրախ կ'ըլլանք աջակցելու Ձեզի: Յարգանքով՝

Հարգանքով՝

Զարեհ Սինանյան

© 2021 Բոլոր իրաւունքները պաշտպանուած են
Հայաստանի Հանրապետութեան Սփիւռքի գործերու
գլխաւոր յանձնակատարի գրասենեակի եւ *Repat Armenia*
հիմնադրամի կողմէ

Շապիկի նկարը՝ Յասմիկ Ղազարեան Օլսոնի



ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՓՅՈՒՌՔԻ ԳՈՐԾԵՐԻ
ԳԼԽԱՎՈՐ ՆԱԵՆՏՆԱԿԱՏԱՐԻ
ԳՐԱՄԵՆՅԱԿ

Repat
Armenia >>

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Սփիւռքի գործերու գլխաւոր յանձնակատարի գրասենեակի մասին	1
Repatriation հիմնադրամի մասին.....	2
Հայաստան տեղափոխուելու նախապատրաստում.....	3
Քաղաքացիութիւն ստանալու դիմում.....	4
Կեցութեան կարգավիճակ եւ աւելին.....	6
Անձնական գոյքի տեղափոխում.....	7
Առողջապահութիւն.....	8
Կրթութիւն.....	9
Դրամատնային գործարքներ եւ ֆինանսներ (ելեւմտական հարցեր).....	10
Զբաղուածութիւն-աշխատանք.....	11
Աշխատանքի թոյլտուութիւն.....	12
Վարձակալութիւն.....	13
Թաղային (կոմունալ) ծառայութիւններ, բջջային կապ եւ համացանց.....	14
Հասարակական փոխադրամիջոց.....	15
Վարորդական իրաւունք.....	16
Կեցութեան ծախսեր.....	17
Պետական հարկեր ու վճարներ.....	18
Կարելոր եւ արտակարգ իրավիճակներու հեռախօսահամարներ.....	19

ՍՓԻԻՌՔԻ ԳՈՐԾԵՐՈՒ ԳԼԽԱԴՈՐ ՅԱՆՁՆԱԿԱՏԱՐԻ ԳՐԱՍԵՆՆԵԱԿ

Մեր մասին

Սփիւռքի գործերու գլխաւոր յանձնակատարի գրասենեակը հիմնուած է 2019 թուականի յունիս 11-ին, Հայաստանի Հանրապետութեան վարչապետին կողմէ գրասենեակի կանոնադրութեան հաստատմամբ: Գրասենեակը Հայաստան-սփիւռք յարաբերութիւններու ամրապնդման, խորացման, սփիւռքահայերուն աջակցութեան տրամադրման եւ հայրենադարձութեան գործընթացքի իրականացման, ընդելուզման ապահովման, համահայկական ներուժի քարտէզագրման, սփիւռքը հայաստանեան կեանքին մէջ ներգրաւելու ծրագիրներու ռազմավարութեան եւ քաղաքականութեան մշակման պատասխանատու մարմինն է:

Զարեհ Սինանեանը՝ Սփիւռքի գործերու գլխաւոր յանձնակատարը, եւ Սառա Անճարգոլեանը՝ գրասենեակի ղեկավարը, հայրենադարձներ են: Կառուցը բաղկացած է տարբեր ստորաբաժանումներէ, որոնց մէջ ներգրաւուած են ներկայացուցիչներ սփիւռքի հայ համայնքներէն:

Մեր հայեցակարգը

Մեր աշխատանքը նուիրուած է եւ՝ Հայաստանի մէջ բնակողներու, եւ՝ համաշխարհային հայկական սփիւռքի մէջ բնակողներու ապագայի եւ հեռանկարներու բարգաւաճման, հայկական ինքնութեան պահպանման եւ հայ ժողովուրդի երկու անբաժանելի մասերուն առաւելագոյն ընդելուզման: Հայաստանի եւ սփիւռքի հզօրութիւնն ու կենսունակութիւնը փոխկապակցուած են, եւ մեր նպատակներն ու քաղաքականութիւնը նպատակաւորուողուած են ընդհանուր հետաքրքրութիւններու յառաջմղման:

Սփիւռքի գործերու գլխաւոր յանձնակատարի գրասենեակը կը գործէ որպէս կարեւորագոյն կամուրջ՝ համախմբելով համահայկական ներուժը եւ սփիւռքի մէջ բնակող մեր հայրենակիցներուն լիովին ներգրաւելով հայրենիքի կեանքին մէջ: Սփիւռքի աշխոյժ մասնակցութեամբ եւ նուիրուածութեամբ մենք կրնանք ստեղծել այն հայրենիքը, որուն մասին բոլորս կ'երագենք՝ այս ճանապարհով ամրապնդելով եւ հզօրացնելով նաեւ սփիւռքը:

Վազգէն Սարգսեան 3
Երեւան, Հայաստան 0010
(+374) 10 589155
diaspora@gov.am
diaspora@gov.am
facebook.com/DiasporaGovAm



ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՄԱՍԻՆ

Repat Armenia հիմնադրամը ոչ պետական, շահույթ չհետապնդող կառույց է, որ հիմնադրուած է 2012 թուականի օգոստոսին՝ հայրենադարձութիւնը խթանելու, հայրենադարձներուն իրազեկելու, ինչպէս նաեւ նախաձեռնելու համար բարձր ազդեցութիւն ունեցող (մասնագիտական, ձեռնարկատիրական) անհատներու եւ ընտանիքներու վերադարձը: Երեւանեան գրասենեակին մէջ տեղակայուած մեր անձնակազմը ամբողջութեամբ պատրաստ է աջակցելու Ձեզի հետեւեալ ուղղութիւններով.

- Խորհրդատուութիւններ, կարիքներու գնահատում եւ յուզող ընդհանրական հարցեր ժամանելէ առաջ կամ յետոյ
- Սահուն ներգրաւում հայրենադարձ համայնքին անդամակցելու միջոցով
- Ուղղորդում հիմնական ընթացակարգերուն եւ հաստատութիւններուն առնչուելուն
- Զբաղուածութեան-աշխատանքի վերաբերեալ խորհուրդներ, աշխատանքի որոնման միջոցներ, HR հաւաքագրման գործակալութիւններու եւ փորձառու հայրենադարձներու հետ կապերու հաստատում
- Գործարար ոլորտի ուղղորդում, կապերու հաստատում մասնագիտական ֆինանսական եւ իրաւական ընկերութիւններու հետ, գործարար համագործակցութիւն եւ խթանում
- Դրամատնային եւ առողջութեան ապահովագրութեան յատուկ փաթեթ

Repat Armenia-ի մէջ մենք յատուկ ուշադրութիւն կը դարձնենք իրազեկման բարձրացման եւ հայրենադարձութեան կարեւորութեան՝ սփիւռքի համայնքներուն մէջ կազմակերպելով ImagineArmenia ֆորումներ, հայրենադարձութեան եւ ընդելուզման վերաբերեալ մշտական առցանց զրոյցներ եւ խմբակային քննարկումներ: Մենք նաեւ կը նպաստենք հայրենադարձութեան միջավայրի զարգացման եւ կ'ազդենք պետական քաղաքականութեան վրայ:

Մեր համայնքին մաս կազմելէ ետք Դուք եւս պիտի կարենաք ներգրաւուիլ գործընթացքին՝ կիսելով Հայաստանի մէջ Ձեր անձնական եւ մասնագիտական փորձը եւ մասնակցելով Repat Armenia-ի կողմէ կազմակերպուած աշխատանքային խումբերու հարցումներուն:

Հանրապետութեան 37
Երեւան, Հայաստան 0010
(+374) 91 464660
integration@repatarmenia.org
www.repatarmenia.org
facebook.com/RepatArmenia



ՀԱՅԱՍՏԱՆ ՏԵՂԱՓՈԽՈՒԵԼՈՒ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ



Առաջնահերթություններ մինչ հայրենադարձուիլը

- Ծրագրեցեք փորձնական ուղեւորություն
- Նախապես պատրաստեցեք բոլոր անհրաժեշտ փաստաթուղթերը
- Դիմեցեք քաղաքացիության, մշտական կամ ժամանակավոր կեցութեան համար
- Ծանօթացեք անձնական իրեր եւ ֆինանսական (նիւթական) ունեցուածք տեղափոխելու կանոններուն եւ ընթացակարգերուն
- Սորվեցեք կամ բարելաւեցեք հայոց լեզուն

Որեւէ տեղափոխութեան ամենակարեւոր կողմը, թերեւս, Ձեր բոլոր փաստաթուղթերուն բնօրինակներուն եւ ատոնց նոտարական կարգով վաւերացուած տարբերակներուն եւ համապատասխան կնիքով թարգմանութիւններուն պարտադիր հաւաքագրումն է: Ստորեւ ներկայացուած է Հայաստանի մէջ իրաւական կարգավիճակ ստանալու, դպրոց արձանագրուելու եւ այլ նպատակներով անհրաժեշտ փաստաթուղթերու ցուցակը.

- Ընտանիքի բոլոր անդամներուն ծննդեան վկայականները
- Անձնագիրները
- Մկրտութեան վկայականը
- Ամուսնութեան վկայականը
- Կրթութեան վկայականները
- Պատուաստումներու եւ բժշկական այլ փաստաթուղթերը
- Վարորդական իրաւունքը
- Անշարժ եւ շարժական գոյքի սեփականութիւնը հաւաստող փաստաթուղթերը

Յաւելում. այս փաստաթուղթերը պէտք է ըլլան թարգմանուած, նոտարական կարգով վաւերացուած կա՛մ այն երկրին մէջ, ուրկէ կը ժամանէք, կա՛մ Հայաստանի մէջ: Որոշ փաստաթուղթեր, ինչպիսիք են ծննդեան, ամուսնութեան եւ մկրտութեան վկայականները, պէտք է վաւերացուած ըլլան համապատասխան կնիքով այն երկրին մէջ, ուրկէ կը ժամանէք: Հայկական դեսպանութիւններու եւ հիւպատոսութիւններու մեծամասնութիւնը կը տրամադրեն նոտարական եւ թարգմանչական ծառայութիւններ:

[Դրոշմակնիքը կը հաստատէ փաստաթուղթը ստորագրած անձին ստորագրութեան իսկութիւնը, ինչպէս նաեւ փաստաթուղթին վրայ դրուած կնիքին կամ դրոշմանիշին իսկութիւնը:]



Կապ հաստատեցեք Սփիւռքի գործերու գլխաւոր յանձնակատարի գրասենեակի եւ Repat Armenia-ի հետ հայրենադարձութեան վերաբերեալ խորհուրդներու եւ Ձեր հայրենադարձութեան ընթացքը կազմակերպելու համար:



Միացե՛ք Armenian Repatriates Network (+10,000 մասնակից) խումբին սահուն ընդելուզման եւ հայրենադարձութեան վերաբերեալ գործնական խորհուրդներու համար:

Իրաւական կարգավիճակները Հայաստանի մէջ

Դուք կրնաք դիմել ՀՀ քաղաքացիութեան, ժամանակաւոր կամ մշտական կեցութեան համար ինչպէս այն երկրին մէջ, ուրկէ կը ժամանէք, այնպէս ալ Հայաստանի մէջ: Կարգավիճակը, որ Դուք կ'ընտրէք, կ'որոշէ Ձեր արտօնութիւններու եւ պարտականութիւններու տեսակը, օրինակ՝ ընտրական իրաւունքը կամ բանակին մէջ ծառայութիւնը:

ՀՀ քաղաքացիութեան ձեռքբերում

Կը գործէ Հայաստանի Հանրապետութեան քաղաքացիութիւն ստանալու չորս եղանակ՝ ըստ ազգութեան, ըստ ամուսնութեան, ըստ բնակութեան վայրի եւ ըստ բացառութեան: Մենք խորհուրդ կու տանք քաղաքացիութիւն կամ մշտական կեցութեան կարգավիճակ ստանալու համար դիմել նախքան Հայաստան տեղափոխուիլը, քանի որ այս գործընթացը կրնայ մինչեւ 6 ամիս եւ աւելի տեւել, եթէ անհրաժեշտ փաստաթուղթերը ներկայացուած չեն:

Յաւելում. քաղաքացիութեան ստացումէն ետք Ձեր հայկական անձնագիրը պէտք է վերցնէք ոչ թէ հայկական դեսպանութենէն կամ հիւպատոսութիւններէն (բացառութեամբ Սուրիոյ, Լիբանանի եւ Իրաքի մէջ դիմողներուն), այլ Հայաստանէն:

Քայլ 1. Նախապատրաստէ փաստաթուղթերը

- անձնագիրը եւ ատոր պատճէնը
- վեց (գունաւոր) լուսանկար 35 x 45 մմ չափով
- ծննդեան վկայականը եւ պատճէնը
- ամուսնութեան վկայականը եւ պատճէնը
- ձեր ամուսինին կամ կնոջ անձնագիրը եւ պատճէնը կամ քաղաքացիութիւնը հաստատող վկայականը երեխային ծննդեան վկայականը եւ պատճէնը
- ազգութեամբ հայ ըլլալը հաստատող փաստաթուղթ

Կը խնդրենք հաշուի առնել, որ հնարաւոր է անհրաժեշտութիւն յառաջանայ ծննդեան եւ ամուսնութեան վկայականները վաւերացնել նոտարով, կնիքով եւ վկայագիրով: Ազգութեամբ հայ ըլլալը հաստատող փաստաթուղթը, օրինակ՝ մկրտութեան փաստաթուղթեր, ծնողներու ծննդեան վկայականներ կամ այլ փաստաթուղթեր, որոնք կրնան կապ ունենալ Ձեր գործին, հնարաւոր է անհրաժեշտութիւն յառաջանայ վաւերացնել այն երկրի դեսպանութեան կամ հիւպատոսութեան գրասենեակին մէջ, ուր տուեալ փաստաթուղթը թողարկուած է:

Քայլ 2. Դիմել քաղաքացիութիւն ստանալու համար

Քաղաքացիութիւն ստանալու դիմումը հիմնականին մէջ կը լրացուի ՀՀ ոստիկանութեան անձնագրային կամ վիզաներու վարչութեան կեդրոնին մէջ (սովորաբար յայտնի է որպէս ՕՎԻՐ): Դուք կրնաք նաեւ դիմումը լրացնել արտերկրի մէջ հայկական դեսպանութեան կամ հիւպատոսութեան գրասենեակներուն մէջ:

Դաւիթաշէն, 4-րդ թաղամաս, 17/10
Երեւան, Հայաստան 0010
(+374) 10 370264

Երկուշաբթի-հինգշաբթի՝ 9:00-18:00, Ուրբաթ՝ 10:00-18:00



Քայլ 3. Հետեւեցէք Ձեր դիմումի կարգավիճակին

Քաղաքացիութիւն ստանալու դիմումը սովորաբար կ'ընթանայ 3-6 ամիս: Նախքան երկրի նախագահը քաղաքացիութեան մասին հրամանագիրը ստորագրելը, այն կ'ուսումնասիրուի ՀՀ ոստիկանութեան, Ազգային անվտանգութեան ծառայութեան, Արտաքին գործոց նախարարութեան, Քաղաքացիութեան կոմիտէի եւ վարչապետի աշխատակազմին կողմէ: Ձեր դիմումը լրացնելէն ետք՝ Դուք կը ստանաք վեց նիշէ բաղկացած ծածկագիր, որուն միջոցով կրնաք առցանց հետեւիլ Ձեր դիմումի ընթացքին www.police.am կայքէջին միջոցով:

Քայլ 4. Մասնակցեցէք երդման արարողութեան եւ ստացէք անձնագիր



Քաղաքացիութիւն ստանալէ յետոյ հարկաւոր է անձամբ գտնուիլ Հայաստանի մէջ անձնագիր ստանալու համար (բացառութեամբ Սուրիայէն, Լիբանանէն եւ Իրաքէն դիմողներուն): Ձեզի կը տրուի օր եւ ժամ ՀՀ ոստիկանութեան անձնագիրներու եւ վիզաներու վարչութիւն (ՕՎԻԲ) երդման արարողութեան մասնակցելու եւ անձնագիրը ստանալու համար:

Յաւելում. Երբ քաղաքացիութեան կը դիմէք քաղաքացիութեան համար դիմելուն կրնաք ընտրել սովորական կամ կենսաչափական անձնագիր եւ ազգային նոյնականացման քարտ(կը խնդրենք հաշուի առնել, որ շատ մը պետութիւններ կը ճանչնան միայն կենսաչափական անձնագիրները, ուստի կ'առաջարկենք դիմել կենսաչափական անձնագիր ստանալու համար): Անձնագիր ստանալը կրնայ տեւել մինչեւ երեք շաբաթ: Այս փուլին Դուք կրնաք նաեւ գրանցել Ձեր հասցէն: Եթէ կը ցանկաք գրանցել տեղական հայկական հասցէ, ապա պարտաւոր էք ներկայացնել Հայաստանի մէջ բնակելու ապացոյց (օրինակ՝ սեփականութեան վկայական, վարձակալութեան պայմանագիր, սեփականատիրոջ համաձայնութիւն եւ այլն: Տե՛ս «Հասցէի գրանցում» բաժինը):

Քայլ 5. Գրանցուեցէք զինուորական կոմիսարիատի մէջ

Եթէ դուք 50 տարեկանէն ցած տարիքային խումբի պատկանող տղամարդ էք, ապա պարտաւոր էք գրանցուիլ տեղի զինուորական կոմիսարիատի մէջ: Եթէ Դուք զինուորական ծառայութիւն իրականացուցած էք այլ երկրի մէջ առնուազն 12 ամիս կամ իրականացուցած էք այլընտրանքային ծառայութիւն առնուազն 18 ամիս, ապա կրնաք ներկայացնել ծառայութիւնը հաստատող վաւերացուած փաստաթուղթ (հիւպատոսական վաւերացմամբ կամ համապատասխան կնիքով): Գրանցումը սովորաբար կը տեւէ 1-3 օր:



Երեւանի մէջ զինուորական կոմիսարիատներու հասցէներ եւ հեռախօսահամարներ

Հալաբեան 19ա	010 399 673
Ազատութեան 2ա	010 200 084
Նելսոն Ստեփանեան 3	010 635 560
Չելսովի 26	010 460 661



Քաղաքացիութիւն ստանալու համար իւրաքանչիւր փուլի մէջ պահանջուող անհրաժեշտ փաստաթուղթերու տեսակի եւ զինծառայութեան պահանջներու վերաբերեալ տեղեկութիւններու համար այցելեցէք diaspora.gov.am կայքի «Հայրենադարձութիւն» բաժինը:

ՀԱՍՑԷԻ ԳՐԱՆՑՈՒՄ ԵՒ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐԱՆԻՉ

Կեցութեան կարգավիճակի տեսակները

Եթէ Դուք չէք դիմեր քաղաքացիութիւն ստանալու համար, ապա կրնաք դիմել կեցութեան կարգավիճակի համար: Վերջինը կ'ըլլայ 3 տեսակի.

- Ժամանակաւոր կեցութեան կարգավիճակ, կը տրուի մինչեւ 1 տարի ժամկետով՝ ամէն անգամ նոյն ժամկետով երկարաձգելու հնարաւորութեամբ
- Մշտական կեցութեան կարգավիճակ, կը տրուի մինչեւ 5 տարի ժամկետով, ամէն անգամ նոյն ժամկետով երկարաձգելու հնարաւորութեամբ
- Յատուկ կեցութեան կարգավիճակ, կը տրուի անձնագրի տեսքով եւ վաւեր է մինչեւ 10 տարի ժամկետով ամէն անգամ նոյն ժամկետով երկարաձգելու հնարաւորութեամբ



Այցելեցէք <http://diaspora.gov.am> կայքի «**Քաղաքացիութիւն եւ կեցութեան կարգավիճակ**» բաժին՝ կեցութեան իրաքանչիւր կարգավիճակի համար իրաւական պահանջներու, անհրաժեշտ փաստաթուղթերու եւ դիմելու վայրի վերաբերեալ տեղեկութիւններ ստանալու համար:

Հասցէի գրանցում

ՀՀ քաղաքացիներն ու կեցութեան կարգավիճակ ունեցող անձիք պէտք է գրանցեն իրենց հասցէն ոստիկանութեան տարածքային բաժին երթալով: Գրանցման ժամանակ հարկաւոր է ներկայացնել Հայաստանի մէջ բնակութիւնը հաստատող վկայութիւն: Ատիկա կրնայ ըլլալ սեփականութեան վկայական կամ բնակելի տարածքի վարձակալութեան պայմանագիր կամ սեփականատիրոջ համաձայնութիւն: Եթէ այդ փաստաթուղթերէն ոչ մէկը հասանելի է, ապա կրնաք դիմել ոստիկանութեան տարածքային բաժին՝ փաստացի ստուգում կատարելու խնդրանքով, որպէսզի հաստատուի նշուած հասցէին մէջ բնակելու փաստը (սովորաբար ատիկա կը տեւ մինչեւ երկու շաբաթ):

Եթէ ՕՎԻԲ-ի մէջ անձնագիր ստանալու համար Դուք չէք գրանցած հասցէն, ապա կրնաք գրանցել զայն ոստիկանութեան տարածքային բաժինին մէջ:

Հանրային ծառայութեան համարանիշ

Հանրային ծառայութեան համարանիշը կ'երաշխաւորէ Հայաստան բնակող քաղաքացիներու եւ օտարերկրեայ քաղաքացիներու ընկերային ապահովութեան իրաւունքներու իրականացումը: Այն ունի եզակի հերթական համար եւ անհրաժեշտ է զբաղուածութեան, ինչպէս նաեւ աղքատութեան եւ գործազրկութեան նպաստներ, ծերութեան եւ հաշմանդամութեան կենսաթոշակներ ստանալու, ինչպէս նաեւ դրամատնային հաշիւ բանալու, հարկեր վճարելու եւ այլնի համար:

Ձեզի անհրաժեշտ կ'ըլլայ Ձեր անձնագիրը կամ կեցութեան կարգավիճակը հաստատող փաստաթուղթ, որպէսզի կարենաք դիմել Հանրային ծառայութիւն համարանիշ ստանալու համար: Պէտք է դիմել ՕՎԻԲ:

Յաւելում. նոյնականացման քարտ (ID քարտ) ձեռք բերելու պարագային այն կը ներառէ Ձեր հանրային ծառայութեան համարանիշը, ուստի կարիք չկայ լրացուցիչ հանրային ծառայութեան համարանիշ ձեռք բերել: Նոյնականացման քարտ կրնան ստանալ միայն Հայաստանի Հանրապետութեան քաղաքացիները:

ԱՆՁՆԱԿԱՆ ԳՈՅՔԻ ՏԵՂԱՓՈԽՈՒՄ

Անձնական գոյքի տեղափոխում

Մշտական բնակություն հաստատելու համար Հայաստան տեղափոխություն Դուք կրնաք Ձեր անձնական գոյքը տեղափոխել առանց տուրքերու եւ մաքսային վճարներու ՀՀ քաղաքացիութիւն, յատուկ կամ մշտական կեցութեան կարգավիճակ ստանալէ յետոյ, եթէ մինչ մաքսային մարմին դիմելը Հայաստանի Հանրապետութենէն բացակայած էք 1825 օր (5 տարի) ժամկէտէն առնուազն 915 օրը եւ նախապէս չէք օգտուած այդ արտօնութենէն:



Ձեր անձնական իրերը ներկրելու ժամանակ մաքսային արտօնութիւններ ստանալու համար իրերը պէտք է ըլլան առանց գործարանային փաթեթաւորման եւ ապրանքանիշին: Դուք կրնաք առանց մաքսային պարտաւորութիւններու ներկրել անձնական օգտագործման գոյքի հետեւեալ տեսակները.

- Էլեկտրական գործիքներու իւրաքանչիւր տեսակէն առաւելագոյնը երեք օրինակ
- Կահոյքի իւրաքանչիւր տեսակէն մէկ հաւաքածու միայն անձնական օգտագործման նպատակով,
- Անձնական օգտագործման մէկ փոխադրամիջոց՝ ինքնաշարժ, որ ձեռք բերուած է տեղափոխութենէն առաջ եւ ՀՀ ներմուծելուն նախկին բնակութեան երկրին մէջ առնուազն վեց ամիս առաջ հաշուառուած (գրանցուած) եղած է տուեալ անձին անունով, ու առկայ է աստիկա հաստատող փաստաթուղթ,
- Այլ անձնական օգտագործման ապրանքները (հագուստ, տնային եւ անկողնային պարագաներ, գիրքեր եւ այլն) կրնան ներմուծուիլ առանց սահմանաչափի:

Յաւելում. աշխատանքի կամ գործարար գործունէութեան հետ կապուած իրերը չեն կրնար ներմուծուիլ առանց մաքսային տուրքերու եւ վճարներու:

Ձեր անձնական իրերը հնարաւոր է ներկրել առանց մաքսային պարտաւորութիւններու Ձեր ժամանումէն յետոյ 18 ամիսներու ընթացքին: Դուք պէտք է մաքսատուն ներկայացնէք ներմուծման հարկազատման դիմում՝ նշելով ներմուծուող ապրանքներու անուանումը, քաշը եւ քանակը, Հայաստանի Հանրապետութեան մէջ Ձեր մշտական բնակութեան իրաւունքը հաստատող փաստաթուղթը, նախքան Ձեր տեղափոխուիլը օտարերկրեայ պետութեան մէջ մշտական բնակութիւնը հաստատող փաստաթուղթը, գոյքի փոխադրման վճարման բնօրինակ անդորրագիրները: Մաքսատունը 3-շաբաթեայ ժամկէտի մէջ կը բաւարարէ կամ կը մերժէ Ձեր դիմումը:

 <http://diaspora.gov.am> Մանրամասնութիւններու համար այցելեցէք diaspora.gov.am կայքի «Անձնական գոյքի տեղափոխում» բաժինը:

Պետական եկամուտներու կոմիտէ
3, 7 Մովսէս Խորենացի փողոց
Երեւան 0015
(+374) 60 544 444
secretariat@customs.am
Երկուշաբթի-ուրբաթ՝ 09:00-18:00



ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹԻՒՆ

Հանրային առողջապահություն

Հայաստանի Հանրապետության մեջ բժշկական օգնություն եւ ծառայություններ տրամադրողները պարտաւոր են առաջին անհրաժեշտութեան բուժօգնություն ցուցաբերել իւրաքանչիւր անհատի (ներառեալ օտարերկրացիներու)՝ անկախ անոնց վճարունակութենէն: Հայաստանի Հանրապետության մեջ ծննդական օգնությունը եւ մինչեւ 18 տարեկան քաղաքացիներուն մատուցուող բժշկական ծառայությունները կը տրամադրուին անվճար (ընթացակարգերու տեսակներու որոշակի սահմանափակումներով): Առկայ են բազմաթիւ ծրագիրներ, որոնք կ'աջակցին կարիքաւորներուն անհրաժեշտ բժշկական օգնութիւն ստանալու համար:

Առողջութեան առաջնային կարիքներու համար մարդոց մեծամասնութիւնը կը նախընտրէ գրանցուիլ տարածքային համաբուժարաններու կամ մասնաւոր հիւանդանոցներու մէջ: Հանրային բուժարաններու ծառայութիւններու գերակշիռ մասն անվճար է:

Գրանցուելու համար պէտք է.

1. Գտնել ֆիզիքապէս Ձեզի ամենամօտ տարածքային համաբուժարանը
2. Այցելել այնտեղ անձնագրով եւ սոցիալական քարտով
3. Պայմանագիր կնքել համաբուժարանին հետ՝ դառնալով անոր շահառուն

Յաւելեալ տեղեկութիւններու համար կապ հաստատեցէք Առողջապահութեան նախարարութեան հետ:



Առողջապահութեան նախարարութիւն

3-րդ կառավարական շէնք

Երեւան, Հայաստան 0010

(+374) 60 808003

info@moh.am

www.moh.am



Բժշկական ապահովագրութիւն

Հայաստանի մէջ անհատական հիմունքներով բժշկական ապահովագրութիւն ունենալն ընդունուած չէ, ուստի Ձեզի համար աւելի մատչելի եւ շահաւէտ պիտի ըլլայ ներառուիլ ընկերութեան փաթեթի մէջ:

Մատչելի առաջարկներ ապահովելու համար Repat Armenia հիմնադրամը կը համագործակցի նաիրի Ինչուրանսի հետ: Առաջարկին արժէքը տարեկան կը կազմէ 120,000 ՀՀ դրամ (մօտ 250 ԱՄՆ տոլար), 3 եւ աւելի անդամներէ բաղկացած ընտանիքի համար աւելի քիչ կ'արժէ, եւ կ'ընդգրկէ մինչեւ 7 մլն ՀՀ դրամ (մօտ 14,500 ԱՄՆ տոլար) արժողութեամբ բժշկական ծառայութիւններ Հայաստանի եւ Արցախի մէջ:



Repat Armenia-ի փաթեթին մէջ ներառուած ծառայութիւններուն վերաբերեալ լրացուցիչ տեղեկութիւններ ստանալու համար այցելեցէք repatarmenia.org:

Յաւելում. Այստեղ ներկայացուած գիները ենթակայ են փոփոխման:

ԿՐԹՈՒԹԻՒՆ

Հայաստանի Հանրապետության քաղաքացիներու, ներառեալ՝ երկքաղաքացիներու, կեցութեան կարգավիճակ ունեցողներու համար պետական մանկապարտէզները եւ ընդհանուր միջնակարգ կրթութիւնն անվճար են: Դասաւանդումը կ'իրականացուի արեւելահայերէնով: Բոլոր պետական դպրոցներուն մէջ կը դասաւանդուին անգլերէն եւ ռուսերէն, որոշները նաեւ կ'առաջարկեն գերմաներէն, ֆրանսերէն եւ չինարէն: Պետական քոլեճներն ու համալսարանները նոյնպէս կ'առաջարկեն զեղչուած կամ անվճար տեղեր այն ուսանողներուն համար, ովքեր բարձր գնահատականներ կը ստանան ընդունելութեան քննութիւններու ժամանակ:

Կան նաեւ բազմաթիւ մասնաւոր մանկապարտէզներ, դպրոցներ եւ համալսարաններ, որոնք յաճախ ունին մասնագիտացման այնպիսի ոլորտներ, ինչպիսին են լեզուները, միջազգային կամ կրօնական կազմակերպութիւններու հետ կապը: Մասնաւոր հաստատութիւններու մէջ ուսման վարձի չափը տարբեր է:

Գրանցուիլ հանրային դպրոցի մէջ

Ձեր երեխան հանրակրթական դպրոցի մէջ գրանցելու գործընթացը բաւականին դիւրին է, պարզապէս պէտք է այցելել համապատասխան դպրոց՝ ունենալով հետեւեալ փաստաթուղթերը.

1. Երեխային ծննդեան վկայականը կամ անձնագիրը (պատճեններով)
2. Տեղեկանք երեխային հաշուառման մասին, այսինքն՝ թէ որ տարածքին մէջ ան հաշուառուած է
3. Եթէ երեխան պէտք է ընդունուի առաջին դասարանէն բարձր, ապա վերցուցէք նաեւ անոր անձնական գործը, պարզ խօսքով՝ այն բոլոր փաստաթուղթերը, որոնք առկայ եղած են նախորդ դպրոցին մէջ
4. Ակադեմիական յառաջընթացի տեղեկանք, որ կը ներկայացնէ երեխային գնահատականներու (նիշերու) ցուցակն ըստ առարկաներու: Եթէ ուսումնական տարին դեռ չէ ամառուած, ընթացիկ բացակայութիւններու ցուցակը եւս պէտք չէ մոռնալ
5. 10-էն 12-րդ դասարան ընդունուողներուն անհրաժեշտ է հիմնական կրթութեան վկայականի բնօրինակը
6. Ձեր երեխային 2 գունաւոր լուսանկար (3x4 չափի)
7. Տեղեկանք երեխային առողջական վիճակին մասին (այս փաստաթուղթը պարտադիր չէ, սակայն կրնայ պահանջուիլ ուսումնական հաստատութեան կողմէն)

Յաւելում. այն փաստաթուղթերը, որոնք օտար լեզուներով են, պէտք է թարգմանուին հայերէնի եւ վաւերացուին նոտարով:

Կրթութեան վերաբերող յաւելեալ հարցերու համար դիմեցէք ՀՀ կրթութեան, գիտութեան, մշակոյթի եւ սպորտի (մարմնամարզութեան) նախարարութիւն:

Կրթութեան, գիտութեան, մշակոյթի եւ սպորտի նախարարություն

2-րդ կառավարական շէնք

Վազգէն Սարգսեան 3

Երևան, Հայաստան 0010

(+374) 10 599600

info@escs.am



ԴՐԱՄԱՏՆԱՅԻՆ ԳՈՐԾԱՐՔՆԵՐ ԵՒ ՖԻՆԱՆՍՆԵՐ

Դրամատնային անձնական հաշիւները հիմնականին մէջ կ'օգտագործուին աշխատավարձի, պետական նպաստի ու կենսաթոշակի ստացման, եւ թաղային (կոմունալ) վճարումները կատարելու նպատակով: Բջջային եւ համացանցային դրամատան գործունէութիւնը տարածուած է թաղային ծառայութեան (կոմունալ) վճարումներու, մասնաւորապէս՝ հեռախօսային եւ համացանցային ծառայութիւններու համար:



Եթէ կը ցանկաք բանալ դրամատնային անձնական հաշիւ, Ձեզի անհրաժեշտ է ունենալ.

- Անձնագիր
- Սոցիալական քարտ
- Գրանցման հասցէ

Յաւելում. Օտարերկրեայ քաղաքացիները կրնան անձնական դրամատնային հաշիւ բանալ առանց վերը նշուած փաստաթուղթերու՝ իրենց անձնագիրներու նոտարական թարգմանութեամբ:

Դրամատուներու եւ երկրի ֆինանսական համակարգի վերաբերեալ տեղեկութիւններու համար այցելեցէք Կեդրոնական դրամատան կայք՝ www.cba.am:

Բոլոր դրամատուներն ունին մասնաճիւղեր, ուր Ձեր առօրեայ գործարքներու համար կրնաք հերթագրուիլ, վերցնել համարը, եւ երբ այն յայտնուի պաստառին, մօտենալ նշուող պատուհանին:

Յաւելում. ի տարբերութիւն ծայրամասերուն կամ փոքր փողոցներուն մէջ գտնուող դրամատուներուն՝ կեդրոնին մէջ գործող դրամատուները մշտապէս ծանրաբեռնուած են: Ընդմիջման եւ փակուելու ժամերուն դրամատուներուն մէջ հերթը շատ երկար կը տեւէ:

REPAT ARMENIA TIP. Կ'առաջարկենք օգտագործել **Earlyone** յաւելուածը, որմով կրնաք հերթագրուիլ դրամատուն այցելելէ առաջ:

Repat Armenia-ն կը համագործակցի «Ամերիա» դրամատան հետ, որ ունի յատուկ առաջարկներ հայրենադարձներու համար:



Մանրամասների համար այցելեք www.repatarmenia.org

Ֆինանսական ունեցուածքի տեղափոխումը

Օդային կամ ցամաքային ճանապարհով Հայաստան ժամանելուն Դուք կրնաք բերել մինչեւ 10,000 ԱՄՆ տոլար: Եթէ դուք 10,000 ԱՄՆ տոլար եւ ւաւելի կանխիկ գումար (կամ համարժեք այլ արժոյթով) ԵԱՏՄ չհանդիսացող երկրէ կը տեղափոխուիք Հայաստան, ապա պարտաւոր էք այն յայտարարագրել: Կանխիկը կը ներառէ նաեւ ճանապարհորդներու անդորրագիրները:

REPAT ARMENIA TIP. 10,000 ԱՄՆ տոլարէն ւաւելի գումարը (կամ համարժեք այլ արժոյթով) խորհուրդ կը տրուի միջազգային SWIFT փոխանցման միջոցով դրամատնային հաշիւին փոխանցել կամ կատարել արագ դրամատնային փոխանցումներ MoneyGram եւ Unistream համակարգերու միջոցով:

ՋԲԱՂՈՒԱԾՈՒԹԻՒՆ

Հայաստանի մեջ աշխատանքային զբաղուածութեան հնարաւորութիւններ սկսեցէք փնտռել նախօրօք: Մի մոռնաք Ձեր դիպլոմներն ու վկայականները, քանի որ որոշ գործատուներ կրնան պահանջել ատոնց թարգմանուած օրինակները: Որոշ միջազգային կառոյցներ կը պահանջեն բնօրինակները:

Թարմացուցէք Ձեր CV-ին եւ ինքնակենսագրականը: Հայկական ընկերութիւններէն շատերը կը նախընտրեն ամերիկեան ոճը, երբ ելեկտրոնային նամակին (մէյլին) կցուած է մէկ էջ: Ուսումնասիրեցէք այն կազմակերպութիւնը, որուն կը դիմէք եւ հաւաստիացուցէք, որ կը համապատասխանէք առաջադրուած պահանջներուն: Repat Armenia-ն կ'առաջարկէ մասնագիտական խորհրդատուութիւն, ինչպէս նաեւ CV-ի լրացման օգնութիւն:

Հայաստանի մեջ նուազագոյն աշխատավարձը կը կազմէ 68,000 ՀՀ դրամ, որ մօտաւոր համարժէք է 150 ԱՄՆ տոլարի: Աշխատավարձերու չափը կը տատանուի 100,000-300,000 ՀՀ դրամի սահմաններուն: 2020 թուականի ամառուայ դրութեամբ երկրի աշխատավարձերու միջին ցուցանիշը կը կազմէ շուրջ 188,000 ՀՀ դրամ կամ մօտ 400 ԱՄՆ տոլար:

Repat Armenia-ն կրնայ ուղղորդել Ձեզի աշխատանքի որոնման գործընթացքին եւ ապահովել զբաղուածութեան հնարաւորութիւններով:

REPAT ARMENIA TIP. Ընդլայնեցէք ձեր ծանօթութիւններու շրջանակը: Որքան շատ մարդոց հետ Դուք ծանօթանաք, այդքան աւելի հեշտ կ'ընթանայ Ձեր ընդելուզման գործընթացքը: Թարմացուցէք Ձեր LinkedIn-ը, միացէք Facebook խումբերու, մասնակցեցէք հայրենադարձներու ձեռնարկներուն:

Եկամտահարկ

- Անհատական եկամտահարկը բոլորին համար կը կազմէ 22%
- Սոցիալական ապահովագրութեան հարկը կը կազմէ 5% մինչեւ 500,000 ՀՀ դրամ աշխատավարձի պարագային, այն գերազանցելու պարագային կը կազմէ 10%
- Զինժառայողներու հիմնադրամի պարտադիր վճարը կը սկսի ամսական 1,000 ՀՀ դրամէն եւ կապուած է տուեալ անձի աշխատավարձի չափին:



HR.AM CLUB
Jobs for Repats and Expats
Գործ Կա



Staff.am
Careercenter.am
JobFinder.am



Յաւելեալ տեղեկութիւններու եւ առցանց պաշարներու ամբողջական ցանկի համար այցելեցէք Repat Armenia-ի կայքէջի **«Աշխատանքի կայքեր Հայաստանի մէջ»** բաժինը:

Եթե Դուք կը փափաքիք Հայաստանի մէջ աշխատիլ նախքան քաղաքացիութիւն կամ կեցութեան կարգավիճակ ձեռք բերելը, անհրաժեշտ կ'ըլլայ ստանալ աշխատանքի թոյլտուութիւն: Ձեր գործատուն պէտք է Ձեր անունով դիմէ Աշխատանքի եւ սոցիալական հարցերու նախարարութիւն աշխատանքի թոյլտուութիւն ստանալու համար:

Բարձր հմտութիւններ ունեցող օտարերկրեայ մասնագէտները, ձեռնարկատէրերը, ղեկավարները, տարբեր ոլորտներու դասընթացքներու կամ սարքաւորումներու օգտագործման համար պահանջուած մասնագէտները, կառավարութեան կողմէ առանձնացուած ոլորտներու (օրինակ՝ գիւղատնտեսութիւն, բնական գիտութիւններ, IT, ֆինանսներ, մթերման տեխնոլոգիաներ կամ կառավարում) բարձր որակաւորում ունեցող մասնագէտները, համալսարանի դասախօսները, հաւատարմագրուած արտասահմանեան լրատուամիջոցներու ներկայացուցիչները, փախստականները կամ փոխանակման ծրագիրով ուսանողները ազատուած են աշխատանքի թոյլտուութեան պայմաններէն:

Երբ կը դիմէք աշխատանքային թոյլտուութիւն ստանալու համար, նախարարութիւնը նախ պէտք է համոզուի՝ արդեօ՞ք թափուր պաշտօնը զբաղեցնելու համար համապատասխան որակաւորում ունեցող տեղացի աշխատողներ չկան: Եթէ տեղացիներ կան, ապա Աշխատանքի եւ սոցիալական հարցերու նախարարութիւնը գործատուին հարցազրոյցի համար կ'առաջարկէ անոնց: Գործատուն պարտաւոր չէ գովազդել առաջարկուող պաշտօնը կամ առաջարկել յատուկ աշխատավարձ: Եթէ թեկնածուներ չեն առաջարկուիր, կամ գործատուն հիմնաւոր պատճառներ ունի թեկնածուին մերժելու համար, նախարարութիւնը Ձեզի կը տրամադրէ աշխատանքի թոյլտուութիւն:

Աշխատանքի թոյլտուութիւնը տրամադրելէ յետոյ (սովորաբար 14 օրուան ընթացքին), Դուք պէտք է դիմէք Երեւանի ոստիկանութեան անձնագրային եւ վիզաներու վարչութիւն (ՕՎԻԲ) ժամանակաւոր կեցութեան կարգավիճակ ստանալու համար: Դիմումին պէտք է աւելցնել անհրաժեշտ փաստաթուղթեր՝ ներառեալ բժշկական քննութիւններուն արդիւնքները: Ժամանակաւոր կեցութեան քարտը կը տրամադրուի դիմումը ներկայացնելու օրուընէ մօտ 30-45 օրուան ընթացքին:

Գործատուն Աշխատանքի եւ սոցիալական հարցերու նախարարութիւն պէտք է ներկայացնէ հետեւեալ փաստաթուղթերը.

- Դիմում
- Անձնագիր
- Վկայականներ եւ կրթութիւնը կամ որակաւորումը վկայող փաստաթուղթեր՝ հիւպատոսական վաւերացմամբ (կամ համապատասխան կնիքով)
- Երկու լուսանկար (3x4 սմ)
- Պետական տուրքի վճարման ապացոյց (25,000 ՀՀ դրամ պէտք է վճարուի Ձեր կամ գործատուի կողմէ)

Պետական զբաղուածութեան կեդրոն

Կ. Ուլնեցի 68

Երեւան, Հայաստան 0069

(+374) 10 280625

info@employment.am

www.employment.am



Բնակարանի վարձակալություն

Հայաստանի մեջ վարձակալության գիները կապուած են գտնուելու վայրէն, չափէն, շինութեան տեսակէն, տրամադրուող յարմարութիւններէն եւ ժամանակահատուածէն (ամառուան ամիսներուն՝ զքօսաշրջութեան եղանակի ընթացքին, վարձակալութեան գիները կը բարձրանան): Վարձատրուող բնակարանները հիմնականին մէջ ամբողջութեամբ կահաւորուած են:

Երեւանի մէջ եւ յատկապէս քաղաքի կեդրոնը գիները աննախադէպ բարձր են, այստեղ սթուտիօ բնակարաններու գինը կրնայ սկսիլ 300 ԱՄՆ տուլարէն: Որպէս կանոն՝ որքան հեռու էք կեդրոնէն, այնքան ծախսը քիչ է: Ստուգեցէք Արաբկիր, Նոր Նորք, Շէնգաւիթ եւ Դաւիթաշէն թաղամասերն առաւել յարմարաւէտ տարբերակներու համար:

Ինչէ՞ն սկսիլ

Դուք կրնաք սկսիլ Ձեր որոնումը Facebook-էն՝ միանալով [Armenian Repatriates Network, Find Flatmates/Roommates in Yerevan!](#) խումբերուն: Հարցուցէք, թէ ի՞նչ կը փնտռէք՝ նշելով գինը, չափը եւ գտնուելու վայրը, եւ անկասկած պատասխան պիտի ստանաք:

Կան նաեւ բազմաթիւ կայքեր անշարժ գոյքի գովազդներով, որոնք կրնաք գտնել ըստ գտնուելու վայրին, արժէքին եւ չափին: Ամբողջական ցանկը կրնաք գտնել Repat Armenia կայքի [«Անշարժ գոյք»](#) բաժինին մէջ:

www.list.am

www.real-estate.am

www.myrealty.am

www.realtors.am

www.estate.am

Յաւելում. այս կայքերուն մէջ նոյն յայտարարութիւնը Դուք կրնաք տեսնել մի քանի անգամ տեսնել, քանի որ գործակալները կը վերահրապարակեն ուրիշներու յայտարարութիւնները: Գործակալները հիմնականին մէջ կը ստանան միջնորդավճար (սովորաբար առաջին ամսավճարի 10%-ի չափով) ե՛ւ վարձատուին, ե՛ւ վարձակալին կողմէ: Պատրաստ եղէք վճարել վարձակալութեան առաջին եւ վերջին ամիսներուն համար, ինչպէս նաեւ միջնորդավճար 10%-ի չափով: Եթէ կը ցանկաք շրջանցել գործակալի միջնորդավճարը, փնտռեցէք առանց միջնորդի հրապարակուած տարբերակներ:

REPAT ARMENIA TIP. մի վախնաք բանակցելէն, քանի որ վարձատուները յաճախ պատրաստ են աւելի ցած գիներով բնակարաններ տրամադրել, յատկապէս երկարաժամկետ վարձակալութեան պարագային:

ԹԱՂԱՅԻՆ (ԿՈՄՈՒՆԱԼ) ԾԱՌԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ ԲԶԶԱՅԻՆ ԿԱՊ ԵՒ ՀԱՄԱՑԱՆՑ

Թաղային վճարումներ

Թաղային վճարումները (կազ, հոսանք, էլեքտրականություն, ջուր) հնարավոր է առցանց իրականացնել իրաքանչիւր ամսուայ 8-էն յետոյ: Վճարումները պէտք է կատարել մինչեւ ամսուայ 20-րդ օրը: Վճարումները սովորաբար տարբեր բջջային յաւելուածներու միջոցով կը կատարուին առցանց, որոնց կրնաք կապել Ձեր դրամատնային հաշիւները: Կանխիկ վճարումներ կրնաք կատարել վճարային կայաններու միջոցով, որոնք յաճախ տեղակայուած են առեւտուրի կեդրոններու մօտակայքը: Վճարումը սովորաբար կը կատարուի յաճախորդի համարանիշի կամ հեռախօսահամարի միջոցով, որմով կը կատարուի ծառայութիւնը:



Բջջային վճարումներու որոշ յաւելուածներ.

- [idram](#)
- [Mobidram](#)
- [TellCellWallet](#)
- [EasyWallet](#)
- [ArCa](#)

Յաւելում. ջեռուցման համակարգերը շատ տեղեր ապակեդրոնացուած են, որ տարբերութիւններու կը յանգեցնէ էլեքտրականութեան հոսանքի եւ կազի ծախսերու մէջ: Բնակութեան շէնքի տեսակը եւս ազդեցութիւն ունի թաղային վճարումներու չափին վրայ (մասնաւորապէս՝ ջեռուցումն ու օդափոխութիւնը):

Բջջային կապի եւ համացանցի մատակարարի ընտրութիւն

Հայաստանի մէջ կը գործէ բջջային կապի 3 մատակարար՝ [UCOM](#), [VivaCell](#) եւ [Beeline](#): Երեքն ալ ունին հիմնականին մէջ լաւ ծածկողականութիւն Երեւանի եւ Հայաստանի ողջ տարածքին մէջ:

Դուք կ'ունենաք 2 տարբերակ՝ կանխավճարային եւ յետվճարային փաթեթներ, որոնք կը սկսին 1,000 դրամէն եւ կրնան տատանիլ 1,500-9,500 դրամի սահմաններուն՝ ելլելով Ձեր նախընտրած ծառայութիւններու ընդգրկումէն:

Տնային համացանցը կ'ապահովեն [UCOM](#), [Beeline](#), [Rostelecom](#) եւ այլ ընկերութիւններ: Բոլորը կ'առաջարկեն համացանց/բջջային կապ/հեռուստատեսութիւն ծառայութիւններու համադրութեամբ փաթեթներ, որոնք սովորաբար կը սկսին 6,000 դրամէն: Եթէ կը պատրաստուիք վարձակալել անշարժ գոյք, եղէք ուշադիր, եւ եթէ տարածքին մէջ կան համացանց եւ հեռուստակապ, Դուք պարտաւորուած կ'ըլլաք իրաքանչիւր ամիս վճարել ատոնց համար:

Ծառայութիւնները ձեռք բերելու համար Ձեզի անհրաժեշտ կ'ըլլայ անձնագիր (օտարերկրեայ անձնագիրները նոյնպէս կիրառելի են) կամ նոյնականացման քարտ: Դուք նաեւ պէտք է նշէք Ձեր հասցէն: Եթէ չունիք գրանցման հասցէ, ապա համացանցի մոտեմ ձեռք բերելու համար պէտք է կանխավճար ընէք:

Յաւելում. Արցախ ճամբորդելուն չմոռնաք աշխուժացնել «ռոմինկ» ծառայութիւնը, որպէսզի հնարավոր ըլլայ զանգեր եւ SMS-ներ կատարել Արցախէն դուրս, ներառեալ Հայաստան:

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑ

Հասարակական փոխադրամիջոց

Հասարակական փոխադրամիջոցի ծառայությունները կը ներառեն հանրակառքեր, երթուղային թաքսիներ (մարշրուտկաներ), մեթրո (միայն Երևանի մէջ), գնացքներ եւ գծակառքեր (տրոլէյբուսներ) երկրի տարբեր մասերու մէջ:

Հանրային փոխադրամիջոցի գիները

- Մեթրո (ժ.՝ 7:30 - 23:00). 100 ՀՀ դրամ
- Գծակառք (տրոլէյբուս). 50 ՀՀ դրամ
- Քաղաքային հանրակառքեր. 100 ՀՀ դրամ (70 ՀՀ դրամ Արցախի մէջ)
- Միջքաղաքային հանրակառքեր. 1,000 - 6,500 ՀՀ դրամ՝ կախեալ երթուղիի երկարութենէն
- Գնացքի տոմսերու գիները 1,000 - 2,500 ՀՀ դրամ՝ կախեալ երթուղիի երկարութենէն եւ գնացքի տեսակէն

Երթելու երթեւեկութեան համար բջջային յաւելուածներ

- [A2B Transport](#)
- [Yerevan Metro](#)
- [Transit.am](#)
- [2Park](#)

Հեծանուային երթեւեկութիւնը Հայաստանի մէջ

Հայաստանի մէջ հեծանուային երթեւեկութիւնը կը դառնայ սովորական: Երևանի կեդրոնին մէջ աւելցած են հեծանուային երթուղիներ, եւ կը նախատեսուի աւելցնել ասոնց քանակը:

Համօգտագործման հեծանուային ծառայութիւնները նոյնպէս հասանելի են: Կ'առաջարկենք ներբեռնել [YerevanRide](#) եւ [MIMO Bike](#) յաւելուածները համօգտագործման հեծանուային ծառայութիւններուն համար:



Թաքսի ծառայութիւններ

Հայաստանի մէջ մինչեւ 4 քմ երթեւեկելու համար թաքսի ծառայութիւններու գինը կը սկսի 500-600 դրամէն: Ատկէ ետք հիմնականին մէջ կը գանձուի 100 դրամ 1 քմ-ի դիմաց: Կապուած ծառայութեան մատակարարէն՝ գիները կը տատանուին: [GG](#), [UTaxi](#) եւ [Yandex](#) յաւելուածներն կ'օգտագործուին ուղեւորութիւնն առցանց պատուիրելու համար:

REPAT ARMENIA TIP. Փողոցին մէջ կայանած թաքսիները, մասնաւորապէս՝ Կասկադի, Օփերայի եւ Հանրապետութեան հրապարակին վրայ, կը գանձեն աւելի բարձր վճար:

ՎԱՐՈՐԴԱԿԱՆ ԻՐԱՒՈՒՆՔ

Վարորդական իրաւունք

Եթէ կը ցանկաք ինքնաշարժ վարել Հայաստանի մէջ եւ ունիք միջազգային արտօնութիւն կամ ժամանած էք Վիեննայի պայմանադրութեան անդամ երկրէ (ինչպիսիք են Ռուսաստանը, Վրաստանը եւ Միացեալ Թագաւորութիւնը), ապա կրնաք նոյն վկայականով վարել Հայաստանի մէջ: Եթէ ոչ, ապա պէտք է դիմէք տեղական վարորդական իրաւունք ստանալու համար:

Յաւելում. Քանատան, ԱՄՆ-ն եւ Լիբանանը Վիեննայի պայմանադրութեան անդամ չեն: Վիեննայի պայմանադրութեան անդամ պետութիւններու ամբողջական ցանկին կրնաք ծանօթանալ հետեւեալ յղումով՝ www.mfa.am

Գրաւոր եւ գործնական քննութիւններուն գրանցուիլն այժմ կը կատարուի առցանց:

 roadpolice.am/hy


ՀՀ ոստիկանութիւն գրաւոր քննութիւն յանձնելու նամակ ուղարկելու համար օգտագործեցէք այս հարթակը: Դուք կը ստանաք հաղորդագրութիւն կամ հեռախօսազանգ քննութեան տեղի եւ ժամի վերաբերեալ:

Գրաւոր քննութեան գնահատականները Դուք կը ստանաք քննութեան ամառտի պահուն, որմէ ետք կրնաք դիմել գործնական քննութեան համար:

Զեզի անհրաժեշտ կ'ըլլան անձնագիրը կամ նոյնականացման քարտը կամ անձը հաստատող այլ փաստաթուղթ, ուր նշուած կ'ըլլայ բնակութեան վայրը:

- Գրաւոր քննութիւն . 3,000 ՀՀ դրամ
- Գործնական քննութիւն 3,000 ՀՀ դրամ
- Վարորդական իրաւունքի գինը ՀՀ 12,000 դրամ




Վարորդական իրաւունքի նուազագոյն տարիքը 18 տարեկանն է: Հայաստանի մէջ ինքնաշարժ վարելու համար ինքնաշարժին ապահովագրութիւնը պարտադիր է:

 Հայաստանի մէջ երթելու վարորդական, թեստերու նմուշներու, տեսագրուած դասընթացքներու եւ այլնի վերաբերեալ յաւելեալ տեղեկութիւններու համար այցելեցէք www.varord.am կայք:

ԿԵՑՈՒԹԵԱՆ ԾԱԽՍԵՐ

Հայրենադարձներու առաջին հարցերէն մէկն այն է, թէ Հայաստանի մէջ կեցութեան ծախսերը որքան կը կազմեն աշխատավարձի չափի համեմատ: Մենք կազմած ենք ամուսնական եւ ընտանեկան կարգավիճակներու վրայ հիմնուած տարբեր պիտոյններու ցուցակներ, որպէսզի օգնենք հայրենադարձներուն պատկերացնել իրենց պիտոյնն:

Իրաքանչիւր անհատի եւ ընտանիքի կեցութեան ծախսը կը տարբերի՝ ելլելով անոնց անձնական կարիքներէն եւ ծախսային սովորութիւններէն: Այս գնահատականները հիմնուած են հայրենադարձներու ծախսային սովորութիւններու վրայ:

ԱՄՍԱԿԱՆ ՊԻՏՃԷ (ԱՄՆ տոլար)	 ՄԻԱՅՆԱԿ	 ԶՈՅԳ	 ԸՆՏԱՆԻՔ
ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹԻՒՆ	\$200-300	\$250-450	\$300-500
ԹԱՂԱՅԻՆ ՎՃԱՐՈՒՄՆԵՐ (ՀՈՍԱՆՔ/ ԿԱԶ/ ԶՈՒՐ/ ՀԱՄԱՅԱՆՑ / ԲԶԶԱՅԻՆ ԿԱՊ)	\$30-50	\$50-100	\$80-150
ՍՆՈՒՆԴ (ԽԱՆՈՒԹՆԵՐ, ՍՆՈՒՄՆԻ ԿԵՏԵՐ)	\$100-250	\$250-350	\$300-400
ԵՐԹԵԿԵՎՈՒԹԻՒՆ (ՄԵԹՐՈ/ ՀԱՆՐԱԿԱՌՔ/ ԹԱՔՍԻ/ ԻՆՔՆԱՇԱՐԺ)	\$20-50	\$50-100	\$80-150
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ (ԲԺԻՇԿԻ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ 1 ՄՆԶԻ ՀԱՄԱՐ)	\$10-40	\$10-40	\$10-40
ԱՊՐԵԼԱԿԵՐՊ	\$100-300	\$200-500	\$300-600

Յաւելում. այստեղ հաշուարկուած կեցութեան ծախսերը հիմնուած են երեւանեան գիներու վրայ: Վարձակալութիւնն ու բնակարաններու գիները այլ քաղաքներու մէջ, օրինակ՝ Գիւմրի, Վանաձոր եւ Կապան, աւելի մատչելի են:

Դուք նախապէս կրնաք հաշուարկել Ձեր ծախսերը numbeo.com կայքի միջոցով:

ՀԱՐԿԵՐ ԵՒ ՎՃԱՐՆԵՐ

Ստորեւ կրնաք գտնել պետական հարկերու եւ ծախսերու բաշխումը, քանի որ ատոնք կը վերաբերին հայրենադարձութեան գործընթացքին, որ մանրամասն նկարագրուած է այս ուղեցոյցին մէջ:

ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՎՃԱՐՈՒՄՆԵՐ

Քաղաքացիութիւն ստանալու դիմում.....	1,000 դրամ
Սովորական անձնագիր	1,000 դրամ
Կենսաչափական (բիոմետրիկ) անձնագիր.....	25,000 դրամ
Նոյնականացման քարտ (ID քարտ).....	3,000 դրամ
Հասցէի գրանցում.....	1,000 դրամ
Անձնագիր կամ ID քարտի արագ թողարկում	
3աջորդ աշխատանքային օր.....	20,000 դրամ
3 աշխատանքային օրուայ ընթացքին.....	10,000 դրամ
5 աշխատանքային օրուայ ընթացքին.....	5,000 դրամ
Ժամանակաւոր կեցութեան կարգավիճակ, քարտ եւ գրանցում.....	105,000 դրամ
Մշտական կեցութեան կարգավիճակ, քարտ եւ գրանցում.....	140,000 դրամ
Յատուկ կեցութեան կարգավիճակ, յատուկ անձնագիր եւ գրանցում.....	150,000 դրամ
Ժամանակաւոր կեցութեան կարգավիճակի երկարացում.....	105,000 դրամ
Մշտական կեցութեան քարտի փոփոխում.....	20,000 դրամ
Մշտական կամ ժամանակաւոր կեցութեան քարտի վերականգնում.....	12,000 դրամ
Նոր յատուկ անձնագրի թողարկում կորսնցնելու պարագային.....	75,000 դրամ



Յաւելեալ տեղեկութիւններու համար այցելեցէք մեր կայքէջը՝ diaspora.gov.am

Հրշեջ ծառայություն.....	101
Ոստիկանություն.....	102
Շտապ բուժօգնություն.....	103
Կազմի վթարային ծառայություն.....	104
Արտակարգ իրավիճակներու ճգնաժամային կառավարման կեդրոն.....	911/101
Երեւանի քաղաքապետարանի թէժ գիծ.....	105
Երեւանի քաղաքի ճգնաժամային կառավարման կեդրոն.....	108
Ճշգրիտ ժամանակ.....	110
Սփիւռ տեղեկատուական համակարգ.....	113
Ճանապարհային ոստիկանություն.....	177
Երկաթուղի.....	184
Զուարթնոց օդակայանի տեղեկատու.....	187
Առողջապահութեան նախարարութեան թէժ գիծ.....	8003

diaspora.gov.am
@DiasporaGovAm

